


---

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա. Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922), Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 534 էջ + 16 էջ ներդիր:



Ընթերցողի գրասեղանին է պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ պարբերական մամուլի ծանոթ մեկնաբան Ալբերտ Խառատյանի նոր մենագրությունը, որտեղ վերարտադրվում են Կ. Պոլսում և Զմյուռնիայում հրատարակված հայկական մամուլի ազգային և հասարակական բովանդակության այն հիմնահարցերը, որոնք պետք է ծառանային այդ մամուլի ու հասարակական-քաղաքական մտքի առջև XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ և դրանից հետո: Ըստ էության, ինչպես համոզում է հեղինակը, այդ արևմտահայ մամուլի պատմության վերջին փուլն էր իր հատկանշական հիմնախնդիրներով՝ հայերը երիտթուրքական հեղաշրջումից քիչ առաջ և հետո, նրանց կացությունը Օսմանյան Թուրքիայում, Հայկական հարցը ու դրա նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքի գնահատականը, Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթավայրերի իրականությունը, արևելահայ գրական-մշակութային կյանքը, պարբերականների բովանդակության վերլուծությունները, մամուլի գործիչների բնութագրերը և այլն: Մամուլի հետազոտության ու ընդհանուր տեսության ձևաչափով մենագրության մեջ և առաջին անգամ քննարկվում են նշված ժամանակաշրջանում հրատարակված գրեթե բոլոր առաջատար պարբերականները, որոնց թիվը մյուս, դիտարկված այլ հրատարակությունների հետ անցնում է չորս տասնյակից, ցույց է տրվում դրանց տեղն ու նշանակությունը հայ մամուլի պատմության մեջ: Ա. Խառատյանի այս, հիրավի, հիմնարար աշխատության բովանդակային կողմն ամփոփվում է ժամանակագրորեն հստակ բաժանված երկու շրջանների մեջ. այն բաղկացած է երկու գլխից. առաջին՝ մամուլը 1900–1914 թվականներին, երկրորդ՝ մամուլը 1918–1922-ի ժամանակահատվածում: Հեղինակը գիրքն ընթերցողին ավելի մատչելի դարձնելու նպատակով այն բաժանել է երեք փուլի. նախ, անցյալ դարասկզբից մինչև Առաջին աշխարհամարտ, երկրորդ՝ Առաջին աշխարհամարտի և ցեղասպանության տարիներ և երրորդ՝ մամուլը զինադադարից հետո, մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը: Ժամանակագրական այս կառույցը, կարելի է

կարծել, համապատասխանում է ուսումնասիրվող նյութի թելադրած ներքին տրամաբանությանը և, առհասարակ, արևմտահայ մամուլի պատմության վերջին տասնամյակների ընթացքին: Գրքում հետևողականորեն ցույց է տրվում, որ վերոնշյալ բոլոր ժամանակափուլերում մամուլը կրել է որակական փոփոխություններ՝ առնչված ազգային կյանքի տեղաշարժերի, Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական զարգացումների, համիդյան բռնատիրության և, այնուհետև, երիտթուրքերի վարած ցեղասպանության քաղաքականության, ապա՝ Կ. Պոլսի և Զմյուռնիայի գաղթօջախների ազգային իրականության հետ: Համիդյան գրաքննության պայմաններում խեղդված հրապարակախոսությունը չէր կարող ազդեցիկ լինել ազգային-քաղաքական հարցերի քննարկման տեսակետից, ուստի այն մղվում է երկրորդական բնագիծ՝ կորցնելով իր առաջատար նշանակությունը մամուլի էջերում՝ մի հայտնի չափով միջնորդավորվելով բարոյախոսական որակներով: Փոխարենը, առաջ էր մղվում լրատվությունը, որն ընթերցողին առավել հասկանալի էր դառնում, երբ նրան տեղեկություններ էին տրվում Արևմտահայաստանի իրականության և հայ բնակչության ընդհանուր կացության, նրա կյանքի ու կենցաղի, միջազգային քաղաքական իրողությունների և այլնի մասին: Այս իմաստով անցյալ XX դարասկզբին հատկապես աչքի էր ընկնում «Բյուզանդիոն», «Մանգումեի էֆքյար», «Արևելք», «Հանրագիտակ», «Սուրհանդակ», «Արևելյան մամուլ», «Ծաղիկ» և այլ պարբերականների հասարակական ու մշակութային նշանակությունը: Գրքում ըստ ամենայնի ներկայացված է դրանցից յուրաքանչյուրի ազգային-քաղաքական և հոգևոր ուրույն դերն արևմտահայ կյանքում:

Մամուլի էջերում զարգանում էր նաև գեղարվեստական գրականությունը: XX դարասկզբին հանդես եկան Մ. Մեծարենցը, Ռ. Զարդարյանը, Թլկատինցին, Դ. Վարուժանը, Ռ. Սևակը, Միամանթոն և ուրիշներ: Հայ գրականության մեջ կատարված որակական տեղաշարժերի պայմաններում նոր, արդիական որակներ են ձեռք բերում նաև գեղագիտական ու գրականագիտական միտքը, որ գրախոսվող աշխատության մեջ հատկապես խոր վերլուծությամբ է տրված «Մասիս» գրական շաբաթաթերթին վերաբերող ծավալուն հատվածում: Ի դեպ, աշխատության մեջ մամուլի էջերում տպագրված գեղարվեստական գրականությանն ու գրականագիտական մտքի զարգացումներին հեղինակը հետևում է պատշաճ ուշադրությամբ և անում եզրահանգումներ, որոնց շնորհիվ, կարծում եմ, խնդրո առարկա աշխատությունը ստանում է նաև գրականագիտական ենթաշերտ՝ ընդլայնելով մեր պատկերացումները հայ մամուլի ոչ միայն հասարակական, այլև գրական-գեղագիտական արժեքի վերաբերյալ:

Համիդյան վարչակարգի տապալման հետ կապված՝ 1908–1912 թթ. մամուլն ապրեց ակտիվացում նախորդ տասնամյակների տեղապտույտից հետո: Օսման-

յան Թուրքիայում սահմանադրության թեկուզ և զուտ ձևական հոչակումն ու երիտթուրք կառավարողների շոայլ խոստումները ընդհանուր հայրենիքի, բոլոր ազգերի և նրանց դավանանքների ազատության ու իրավահավասարության մասին, նախապես լավատեսություն էին ներշնչում մարդկանց: Մամուլն ու հրապարակախոսությունն ապրում էին արդուլհամիդյան մոայլ անցյալից բաժանվելու վայելքը: Լրագրությունն իր ուշադրության կենտրոնն էր սկսում դարձնել Արևմտահայաստանի իրական վիճակը, բռնություններով ու հարստահարություններով լեցուն նրա առօրյան, հուսալով, որ երիտթուրքական նորաթուխ իշխանությունները պատշաճ իրավիճակ կստեղծեն երկրում: Մենագրությունը ակնբախ է դարձնում, որ հայ մամուլին այս թմրությունից դուրս բերեց Ադանայի 1909 թ. ողբերգությունը: Լրագրողները նախապես դուրսընկալով կուլ տվեցին երիտթուրքական ապատեղեկատվության խայծը՝ հավատալով, թե, իբր, Ադանայի նախճիրը համիդյան հին վարչակարգի գործն է: Կիլիկյան ջարդի իրական կազմակերպիչների՝ երիտթուրք իշխանավորների դիմակը պետք է պատռվեր այն բանից հետո, երբ նրանք ճիշտ համիդյան ոգով, սպանդի ողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա՝ նրանց մեղադրելով հեղափոխական կոմիտեներ ստեղծելու, անկախ թագավորության երազանքներ փայփայելու և Օսմանյան Թուրքիան անդամահատելու «դավաճանական» ձգտումների մեջ: Դրանից հետո սկսվեցին իշխանությունների պատժիչ գործողություններն ընդդեմ հայերի: Շատ բուռն թափով սկսվեց պատվել երիտթուրքական «արդարադատության» մեքենան՝ ի դեմս զինվորական ասյանների, որոնք անմեղ հայերին սկսեցին պատժել ընդհուպ մինչև մահապատժի վճիռների կայացում: Շատ հատկանշական է, որ Ադանայի դեպքերի վերոհիշյալ կեղծ և մտացածին մեկնաբանությունները երիտթուրքերը գրեթե ամբողջովին վերստին շրջանառության մեջ դրեցին դրանից վեց տարի անց՝ 1915 թ., իրենց սանձազերծած ցեղասպանության հաջորդ արարին և էլ ավելի վիթխարի չափերով կատարած ոճրագործությունները «հիմնավորելու» համար: Ավելացնենք, որ Ադանայի դեպքերի անաչառ գնահատականները հայտնի են հայ և արտասահմանի պատմագիտական աշխատություններից, սակայն այստեղ ևս մենագրության հեղինակը կարողացել է ասել սեփական խոսքը՝ հայտնի իրողությունները բեկելով հայկական առանձին թերթերի ու դրանց թղթակիցների մոտեցումներում, ցույց տալով նրանցից յուրաքանչյուրի որոշակի վերաբերմունքը այդ համազգային ողբերգության նկատմամբ:

Ա. Խառատյանի գրքում ցույց է տրվում, որ եթե երիտթուրքերն իրենց կառավարման առաջին շրջանում չէին արգելափակում հայ մամուլի գործունեությունը, ապա Առաջին աշխարհամարտի մեջ Օսմանյան Թուրքիայի մտնելուց հետո նրանց ռազմական գրաքննությունը (սերտորեն համագործակցելով գերմանական զինվորական կառույցների հետ) պատժիչ կազմակերպություն դարձավ հայ

լրագրության համար: Երիտթուրքերը կործանիչ հարված հասցրին հայ մամուլին: Կ. Պոլսում 1914 թ. սկզբներին լույս տեսնող ավելի քան 30 թերթերից ու ամսագրերից նույն տարվա ընթացքում հրատարակվելուց դադարեցին 25-ը: Եթե մինչև պատերազմը Կ. Պոլսում հրատարակվում էին 7 առավոտյան («Ժամանակ», «Ազատամարտ», «Նոր աշխարհ», «Հայրենիք», հայատառ թուրքերեն «Մանգումեի էֆքյար», «Առավոտ», «Արևելք») և երկու երեկոյան («Բյուզանդիոն», «Բանբեր») թերթեր, ապա պատերազմից առաջ և սկսվելուց հետո դրանց մեծագույն մասը փակվեց գրաքննական վայրագությունների պատճառով: Պատերազմի տարիներին պոլսահայ թերթերից իրենց հրատարակությունը շարունակեցին, և այն էլ՝ զրկված մամուլի բովանդակային հատկանիշներից, ընդամենը չորսը՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և հայատառ թուրքերեն «Ճերիտեի շարգիյե»-ն: Հայ մամուլի նկատմամբ այսպիսի պետական քաղաքականության կրկնությունն ենք տեսնում, ինչպես ցույց է տրվում աշխատության մեջ, նաև Զմյուռնիայում ու շատ ավելի կտրուկ՝ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վիլայեթներում: Հայերի ցեղասպանությանն ընդհուպ նախորդող 1914 թվականին այդ տարածքներում (Վան, Խարբերդ, Սեբաստիա, Թոքատ, Էրզրում, Խոտորջուր, Երզնկա, Նիկոմեդիա, Տրապիզոն և այլուր) հրատարակվող բոլոր թերթերն ու հանդեսները փակվեցին: Փաստորեն, հայությունը Կ. Պոլսում ու Զմյուռնիայում, Արևմտահայաստանում, ինչպես և Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում 1915 թ. ամբողջովին կամ գրեթե ամբողջովին զրկվել էր մամուլից:

Աշխատության երկրորդ գլուխն ընդգրկում է 1918–1922 թթ., Մուղրոսի զինադադարից հետո Կ. Պոլսում և Զմյուռնիայում հրատարակված մամուլի բովանդակության ու պատմության վերլուծությունը: Այստեղ հեղինակը ցույց է տալիս խնդրո առարկա հրատարակությունների մեծ մասի մի հատկանշական կողմը՝ դրանց կարճակեցությունը, որ մասամբ լրացվում էր նոր պարբերականների հայտնությամբ և նույնքան կարճ կյանքով: Հեղինակն այդ բացատրում է մամուլը սնուցանող ազգային ու հասարակական գործոնների թուլությամբ կամ հեղհեղուկ բնույթով՝ պատերազմի ավարտին հետևած տնտեսական ու քաղաքական անորոշությամբ, պատերազմում պարտություն կրած երկրի կառավարման ճգնաժամով, անկայունության ու սպասողականության թանձր մթնոլորտով: Ավելացնենք, որ Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը իր սնուցիչ արմատներից զրկել էր Կ. Պոլսի և Զմյուռնիայի՝ այս կամ այն չափով վերստին հայտնված մամուլը: Այս պայմաններում իսկ հատկապես Կ. Պոլսի թերթերն ու հանդեսներն առաջ էին քաշում հայ հանրություններին հուզող համազգային խնդիրներ, որպիսիք էին՝ Հայկական հարցի և Արևմտահայաստանի ազգային ինքնորոշման հետ կապված ակնկալիքները մինչև Փարիզի հաշտության համաժողովը և դրան հետևած հիասթափություններն արևմտյան տերություններից,

որբերի և գաղթականների հիմնահարցը, Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների նկատմամբ վերաբերմունքը, բուն գաղթօջախների տնտեսական ու մշակութային զարգացմանը խոչընդոտող իրողությունների հաղթահարումը և այլն: Այս և նման բնույթի խնդիրները հետևողականորեն քննարկվում են մամուլի բովանդակության շրջանակներում ու դառնում որոշակի հենք՝ պարբերականների բնութագրման համար: Ավելացնենք նաև, որ Ա. Խառատյանի աշխատությունը անխուսափելիորեն պետք է ունենար նաև իր մեկ այլ երեսակը՝ Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթավայրերի պատմությունը 1918–1922 թվականներին, որ հույժ արժեքավոր է դառնում հատկապես այն իմաստով, որ կցկտուր և շատ քիչ է ուսումնասիրված: Նշված ժամանակաշրջանի այդ գաղթավայրերի ազգային հասարակական ու մշակութային կյանքի, հատկապես զմյուռնահայ գաղթավայրի գոյության վերջին շրջանի բացահայտումները, կարծում եմ, այս աշխատության ակնառու արժանիքներից մեկն է:

Չի կարելի շրջանցել քննարկվող գրքի ևս մեկ այլ արժանիք՝ բուն շարադրանքում, ինչպես և տողատակերում հեղինակի բազմաթիվ կարևոր ու հիմնավորված ճշտումները, որոնք վերաբերում են հայ մամուլի մատենագիտություններին, այս վերջիններիս «բեռնաթափմանը» անճիշտ տվյալներից, մատենագիտական կասկածելի բնութագրերից և այլն:

Աշխատությունը գրված է գիտական բարձր մակարդակ ապահովող կիրթ ու հղկված հայերենով, համապատասխան աղբյուրների և գրականության պատշաճ հենքի վրա:

Ունեմ նաև դիտողություններ. ցանկալի կլիներ, որ հեղինակն անդրադառնար նաև Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես նաև դրանից հետո հրատարակված այն պարբերականների պատմությանը, որ գրքում վերհանված են մինչև 1914 թվականը, բայց և շարունակվել են լույս տեսնել նաև դրանից հետո (օրինակ, «Ժամանակը» և «Վերջին լուրը»): Կարելի էր փոքր-ինչ ընդարձակել մամուլի բնութագրերը հատկապես գրքի երկրորդ գլխում:

Ասվածն ամենևին չի նվազեցնում Ա. Խառատյանի «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922)», հիրավի, դրամատիկ վերնագրով աշխատության բարձր արժանիքները: Այն լրացնում է հայ մամուլի պատմության ցայտօր բաց թողնված մի ամբողջ ժամանակաշրջանի գիտական վերարտադրությունը և անվարան կարելի է ասել, որ պատմագիտական խոշոր ներդրում է նշված բնագավառում:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ